Ծուշանիկ Կուրղինյան

Լուսացավ

Խեչոն խելոք
Ծառա էր լոկ .

Իր գենքն էր հին ցախավելը .
Ամո՞թ բան է ցախ ավլելը:

Ամեն մարդ էլ,
Թեկուզ զարդով
Կամ անզարդ էլ

Դե՛հ, այս կյանքում իր գործն ունի,

Որ հաց ուտի՝
Անբան չհոտի . . .

Հա՛ . . . մեր Խեչոն ժիր ու արի
Աշխատում էր օրը-տարի .
Զարթնում էր միշտ արևից շուտ,
Ու քուն մտնում լուսնից հետո,
Սակայն դարձալ իր խոսքն էր սուտ,
Անունը՝ «խենթ, լակոտ ու տո՛ . . .
Էշ գյուղացի, անբան, անկիրթ,

Ավարա շուն . . . »:
Ու չէր հիշում,

Որ իր կերած փշրանքի հետ,
Որ իր թափած զուր ջանքի հետ
Ե՞րբ չէ դիպել վզակոթին
Ցախավելը կամ ցեխոտ թին . . .

Մի օր կանո՛ւխ . . . Տե՛ր, մեղա՛ քեզ,
Մնաց շշմած Խեչոն մեր հեզ:
Ձայն էր տալիս աղան վերից .

Խաչատուր ջան . . . ընկեր Խեչո,

Մի ջուր բեր ինձ . . . :
Դեմքն էլ ճերմակ.
Թանի նման,
Խոսածներն էլ

Միտք շփոթող բանի նման . . .
Վա՛յ, աղա ջան, էդ ի՞նչ էլավ,
Որ դու էդպես շուտ տեղիցդ ելար .
Թե երեկ շատ կերար փլավ . . .
Թե՞ . . . . . .
Զուր տուր . . . եկան . . . կոմունիստներ . . .
Ես ո՞ւր փախչեմ,
Քանի՞ ոսկով
Ցավս ո՞ւմ պատմեմ
Երկու խոսքով,
Որ ես սովոր լողալուն,
Չեմ դիմանա դղալուն . . . :
Խեչոն իսկույն
Գլխի ընկավ ու ծիծաղից թուլացավ .

Դե՛հ, քեզ մատաղ, գիշե՞ր է, ինչ .
Ի՞նչ զող,
Ի՞նչ փող,
Լուսացա՛վ . . .

1921 թ. 24 հունիսի